ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.02.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Ա.Հովսեփյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՅԱՍՈՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վրացական 16)
2. Արման Ասմանգուլյան Ա/Ձ (ք.Երևան, Ներսիսյան 1, 17)
3. «ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ (ք. Երևան, Շիրազի փ. 50տ., բն. 42)
4. «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ (ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շերամիփ. 51շ. 49բն)
5. «ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ (ք. Երևան, Մանուշյան 96)
6. «ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՍՊԸ (ք.Երևան, Հ. Քանաքեռցու 50)
7. «ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ (ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)
8. «ԹԱՍԿ» ՍՊԸ (ք. Երևան, Դավիթաշեն1 թաղ., 51շ., բն 21)
9. «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ (ք. Երևան, Կիևյան 18/6)
10. «ՄԻՍՄԱ» ՍՊԸ (ք. Երևան, Հանրապետության 49, 7/1)
11. «ՎԱ-ՀԱ» ՍՊԸ (ք. Երևան, Ավան 4-րդ փ. 13շ.)
12. «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԱՐՏԱԴՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ» ԲԲԸ (ք. Երևան, Սաֆարյան 11/1ա)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 23.02.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ, «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ, «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ և «ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** հայտերի.

1. **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում բացակայում է **Հավելված N 2**-ը և ներկայացված լիազորագրում նշված չէ լիազորագրի գործողության ժամկետը:
2. **«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** կողմից ներկայացված **Հավելված 3.1-ում**՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում նշված չէ համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը:
3. **«ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊ** և **«ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊ** ընկերությունները հանդիսանալով ՀՀ ռեզիդենտ՝ ներկայացրել են Հավելված N 3.5-ը /անհրաժեշտ է ներկայացնել **Հավելված N 3.4**-ը/:

Մնացած փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն ՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **24.02.2017թ. ժամը 17:00**-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Ա.Հովսեփյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.02.2017թ. ժամը 17-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Ա.Հովսեփյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.

1.1 **«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն, «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ն** և **«ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում ներկայացրել են շտկված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ- ի** կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել Հավելված N 2-ը և շտկված փաստաթուղթը:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/											
				«ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ*	Արման Ամանդուկյան Ա/Ձ	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	«ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ*	«ԹԱՍԿ» ՍՊԸ	«ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ*	«ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ*	«ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻՈՒՄ» ՍՊԸ	«ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ*	«ՎԱ-ՀԱ» ՍՊԸ*	«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԱՐՏԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԿՇԱԿԱՆ» ԲԲԸ	«ՄԻՍՄԱ» ՍՊԸ*
1	**Ձևաթղթեր**	24795	743850	297240	368200	595000	342200	347130	595000	470000	318368	495900	369000	396720	843030

2	**Ձևաթղթեր**	60000	1200000	470000	414000	698000	588000	720000	880000	630000	518400	900000	569000	840000	1740000
3	**Մատյան**	3000	1740000	3120000	2640000	1440000			3570000	3720000	3017400	2400000	3480000		
4	**Մատյան**	3300	1914000	3399000	2904000	1580000			3927000	3960000	3319140	2640000	3800000		
5	**Արձանագրություն**	5000	300000	195000	127500	170000	165000	172500	220000	192500	149800	250000	189000		300000
6	**Սուրհանդակի միջոցով ուղարկվող փաստաթղթերի գրանցման գիրք**	500	285000	210000	147500	137000	225000	135000	270000	235000	561000	275000	334000		

7	**Քրեական գործի շապիկ և վերահսկ ողական վարույթի շապիկ**	45000	1575000	2450000	1755000	1480000	1485000	1440000	1530000	1800000	1506600	1665000	1900000		
8	**Վկայակա ններ**	200	192000	194000	240000			600000			198000	300000			
9	**Վկայակա ններ**	500	250000		125000			187500				175000			

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

1. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի համար **«ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված գնային առաջարկը, **Արման Ասմանգուլյան Ա/Ձ –ի, «ՄԱՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի, «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկների ինքնարժեքները, **«ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք և ԱԱՀ հանրագումարը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: **Անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:**
2. Ընթացակարգի 3 և 4 չափաբաժինների համար մասնակիցների ներկայացված գնային առաջարկների ինքնարժեքը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները:

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, համաձայն որի առաջարկվող գինը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, բանակցությունների կարող են մասնակցել միայն այն մասնակիցները, որոնց առաջարկած գնի ինքարժեքը կամ ինքնարժեք և ԱԱՀ հանրագումարը բարձր չէ նախատեսված ֆինանսական միջոցներից:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ- ի** հայտը ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը:
2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հաջորդ նիստը հրավիրել **2017թ. փետրվարի 28-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Ա.Հովսեփյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

«ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.02.2017թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Ա.Հովսեփյանը, Ե.Հովհաննիսյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Միաժամանակյա բանակցությունների մասին

«ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն 8-րդ չափաբաժնի համար ներկայացրել է նոր գնային առաջարկ, համաձայն որի ընդանուր գինը նվազեցվել է 4000 ՀՀ դրամով՝ կազմելով 190000 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1, 8 չափաբաժինների համար **«ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** -ին,
2, 5, 9 չափաբաժինների համար **Արման Ասմանգուլյան Ա/Ձ** -ին,
6 չափաբաժնի համար **«ԹԱՍԿ» ՍՊԸ** –ին,
7 չափաբաժնի համար **«ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1, 5 չափաբաժինների համար **«ԽԱՉԱՐԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ» ՍՊԸ** -ին,
2 չափաբաժնի համար **«ԱԿԱԴԱ ՊՐԻՆՏ» ՍՊԸ** –ին,
6 չափաբաժնի համար **Արման Ասմանգուլյան Ա/Ձ**–ին,
7 չափաբաժնի համար **«ԲԵԿՈՐ-ՀՐԱՏ» ՍՊԸ** –ին:

1.3 7-րդ չափաբաժնի համար **«ԹԱՍԿ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ընդհանուր գինը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները:

2. <Գնումների մասին> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կետի համաձայն ընթացակարգի 3, 4 չափաբաժինները հայտարարել չկայացած:

3. Հաստատել ընթացակարգի 3, 4 չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը(կցվում է):

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Ա.Հովսեփյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան